Հավելված N 2
2024 թվականի հունվարի 22-ին կնքված
1032-11002/2024-ԱԴ պայմանագրի

# ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N 4

## 1. **Ընդհանուր տեղեկատվություն**

| | |
|---|---|
| Միջոցառման անվանում | «Տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» |
| Դրամաշնորհի N | Լոտ 2. Երևան - 2 |
| Դրամաշնորհատու կազմակերպություն | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| Դրամաշնորհառու կազմակերպություն | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| Միջոցառման իրականացման ժամանակահատված | 01.01.2025-31.12.2025թթ. |
| Հաշվետու ժամանակահատված | 01.10.2025.—30.12.2025թթ |
| Ներկայացման օր | 15.12.2025թ |
| Հաշվետվության պատասխանատու<br>(անուն, ազգանուն, պաշտոն) | Մարգարիտ Հովհաննիսյան<br>սոցիալ-առողջապահական ծառայությունները համակարգող |

## 2. Բովանդակային հաշվետվություն

**2.1. Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 և թիվ 7 հավելվածներով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.2. Խնդրում ենք նկարագրել միջոցառման առաջընթացը՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ միջոցառման խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- **Սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության** տրամադրման շրջանակներում սոցիալական աշխատողի կողմից իրականացված տնայցերի միջոցով աջակցություն է տրամադրվել 152 շահառուի Երևանի Աջափնյակ, Դավթաշեն և Մալաթիա - Սեբաստիա համայնքներում: Սոցիալական աշխատողներիի կողմից իրականացվել է կարիքի գնահատում և վերագնահատում, որի արդյունքում կատարվել է՝ 18 դեպքի վարում
    - ✓ Վերափաստագրման գործընթացի կազմակերպում ընտանեկան նպաստ համակարգում-14
    - ✓ Աջակցող միջոցի ձեռքբերման կազմակերպում - 3
    - ✓ ԱՖԳ համակարգում գրանցում և ֆունկցոնալության գնահատման կազմակերպում– 1

  Կենցաղային թափոնների վարձավճարների զրոյացման նպատակով արտոնության կիրառման համար վարչական շրջանների համապատասխան բաժիններ 3 շահառուի համար ներկայացվել են դիմումներ:

  1 շահառուի համար վարչական շրջանի համապատասխան բաժին դիմում է ներկայացվել Աղբահանության հավելավճարից գույքահարկի ուղղորդման համար:

  3 շահառուի համար վարչական շրջանի համապատասխան բաժնից ձեռք է բերվել աղբահանության ու գույքաչափի պարտքի մասին տեղեկանք և իրականացվել վճարում:

  2 շահառուի համար վարչական շրջանից ձեռք է բերվել միայնակ ապրելու մասին տեղեկանք՝ ներկայացնելու ՄՍԾ տարածքային կենտրոն Ընտանիքի անապահովության համակարգում հաշվառվելու նպատակով:

  Եռամսյա հրատապ օգնության դիմում է ներկայացվել 1 շահառուի համար:

  4 շահառուի համար իրականացվել է կենսաթոշակի վճարման ձևի փոփոխություն :

  Ընտանիքի անապահովության միավորի տեղեկանքի հիման վրա կազմակերպվել է 1 բուժում ստացիոնար պայմաններում:

  Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 21 ուղղորդում. միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:

  «Վեոլիա ջուր» ՓԲԸ –ում 1 շահառուի համար տրվել է դիմում նոր ջրաչափի տեղադրաման համար:

  «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում 1շահառուի համար տրվել է դիմում բնակարանի գազաֆիկացման համար:

  «Հույս տուն» ՀԿ-ից 2 շահառուի համար ստացվել և հանձնվել է սննդային փաթեթ՝ շարունակական:

  7 շահառուի համար վարչական շրջանների թաղապետարաններից ձեռք է բերվել հիգիենիկ և սննդային փաթեթներ և հանձնվել շահառուներին :

  7 շահառուի համար դիմում - բացատրագիր է ներկայացվել ՄՍԾ՝ էլեկտրաէներգիայի գերածախսի վերաբերյալ:

  3 շահառուի համար ՄՍԾ ներկայացվել է երկրից բացակայելու մասին բացատրագիր:

4 շահառուի իրականացվել է ուղեկցում տարբեր պոլիկլինիկաներ,վ արչական շրջան. ՄՍԾ տարածքային կենտրոն, 3 շահառուի ուղեկցում «Իզմիրլյան » ԲԿ:
1 շահառուի համար «Ստրոյ մաստեր» Դոմոֆոն ՍՊԸ դիմում է ներկայացվել հնարավորին դեպքում վճարման արտոնություն կիրառելու համար:
Կարիքների վերհանման արդյունքում հոգեբանական աջակցության կարիք ունեցող 15 շահառուների հոգեբանի կողմից տրամադրվել է մասնագիտական հոգեբանական աջակցություն, որը միտված է եղել անձի նյարդային լարվածության թուլացմանը, հույզերի կառավարմանը, տագնապային իրավիճակների հաղթահարմանը:
Խորհրդատվական աջակցության շրջանակներում 2 շահառուների շարունակական տեղեկատվություն է տրամադրվել իրենց իրավունքների վերաբերյալ. անհրաժեշտության դեպքում իրականացվել է շահերի պաշտպանություն:
Ազատ ժամանցի կազմակերպման շրջանակներում կազմակերպվել է միջոցառումներ՝ նվիրված Տարեցների միջազգային օրվան և էքսկուրսիաներ՝ դեպի Օշական. Աշտարակ, Դիլիջան, Սևան՝ Հայրիվանք, որոնց մասնակցել է թվով 24 շահառուներ:

- **Բժշկական օգնության տրամադրման** շրջանակներում տունայց է իրականացվել 152 շահառուի՝ ուղղված շահառուների առողջական վիճակի վերահսկմանը, տանը առկա դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգմանը: Հաշվետու ժամանակահատվածում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող թվով 69 շահառուի համար պետական պատվերի շրջանակներում տարբեր պոլիկլինիկաներից.դեղատներից և բժշկական կենտրոններից ձեռք է բերվել անվճար և համավճարով դեղորայք:
    - 27 շահառու ուղեկցվել է բժշկական տարբեր հաստատություններ՝ հետազոտման, ախտորոշման, բուժման նպատակով,
    - 6 շահառուի կատարվել է միջմկանային ներարկում (շարունակական),
    - 18 շահառուի համար կատարվել է գլյուկոմետրիա,
    - 6 շահառուի համար ստացվել է խորհրդատվություն և թերապևտի կողմից նշանակված դեղատոմսը հանձնվել է շահառուին,
    - 6 շահառուի համար կատարվել է անվճար բուժհետազոտության կազմակերպում՝ ընտանիքի անապահովության միավորի մասին տեղեկանքի հիման վրա,
    - 22 շահառուի համար կատարվել է դեղորայքային գնումներ շարունակական,
    - 2 շահառուի համար կազմակերպվել է վիրահատություն,
    - 5 շահառուի համար տեղամասային պոլիկլինիկայից վերցվել է բժշկական քարտից քաղվածք,
    - 7 շահառուի կատարվել է դեղորայքի պիտանելիության ժամկետի ստուգում,
    - 7 շահառուի համար իրականացվել է վերքի շարունակական մշակում,
    - 2 շահառուի համար կազմակերպվել է հետազոտություններն իրականացում տնային պայմաններում,
    - 4 շահառուի համար իրականացվել է հսկող պոլիկլինիկայի փոփոխություն:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում համացանցում տեղադրվել է հետևյալ նյութը.

1.Տարեցների միջազգային օրվան նվիրված միջոցառումից կադրեր կարելի է տեսնել հետևյալ հղումով՝ https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02doDBJGbFtES6FNECy4tQYtfeyBBppnVR9ooCHaKkBTCgtdQ7aP4BpBpWwJEjdGF1l&id=100081543423963
2.Տարեցների միջազգային օրվան նվիրված մեկ այլ միջոցառումից տեսանյութ կարելի է տեսնել հետևյալ հղումով

https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02nk4u19LWZudobvdCVF2mSt7vXAGt5m6AemsmKCYZED1bg9EaAAryJU2JdZwt9Hn7l&id=100081543423963

3. Դեպի Սևան-Հայրավանք էքսկուրսիայից կադրեր կարելի է տեսնել հետևյալ հղումով
https://www.facebook.com/permalink.php?story_fbid=pfbid02L93BMegodktLJbJsg1RrF515Q5P3K8SVLCBiKa8MNyLFKYSxmi4E5UmfMFpgkNcTl&id=100081543423963

**2.3. Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են միջոցառման գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացմանը խոչնդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4. Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սոցիալ- հոգեբանական և խորհրդատվական աջակցության տրամադրում.
- կենցաղային սպասարկում և խնամք.
- բժշկական օգնության կազմակերպում:

**2.5. Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել միջոցառման աշխատանքային պլանով, բայց իրականացվել են միջոցառման նպատակին հասնելու համար:**

Հաշվետու ժամանակահատվածում Աչափնյակ. Դավթաշեն և Մալաթիա-Սեբաստիա տարածքային կենտրոնների սոցիալական աշխատողները մասնակցել է ՄԱԾ ՏԿ-ում իրականացվող ֆորումին, որտեղ ներկա էին վարչական շրջաններում գործող այլ ՀԿ-ներից ներկայացուցիչներ: Քննարկվել են տարածքային կենտրոններում առաջացած հրատապ խնդիրներ՝ կապված շահառուների հետ: Ձեռք բերվել պայմանավորվածություն՝ համագործակցությունը շարունակական դարձնելու նպատակով:

Հաշվետու ժամանակահատվածում Աչափնյակ.Դավթաշեն, Մալաթիա-Սեբաստիա համայնքները սպասարկող բոլոր աշխատակիցները մասնակցել են PUM կազմակերպության միջազգային փորձագետի կողմից «Հիշողության խնդիրներ ունեցող տարեցների հետ աշխատանքի առանձնահատկությունները» և «Նորարարական մոտեցումները տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց հետ աշխատանքում. ակտիվ ծերացում» թեմայով երկօրյա դասընթացին:
Հաշվետու ժամանակահատվածում Մալաթիա-Սեբաստիա տարածքային կենտրոնի սոցիալական աշխատողը մասնակցել է ԱՍՀՆ ազգային ինստիտուտի կողմից կազմակերպած «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության իրավական հիմքերը» թեմայով վերապատրաստման դասընթացին:

Ձևաչափ

ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության տնային պայմաններում խնամքի մատուցված ծառայությունների վերաբերյալ

| h/h | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 150/150 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 132 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 8 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 5 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | - |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 5 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 142 |
| 2. | Ըստ գնահատված կարիքի՝ դասակարգված խմբերում ընդգրկված շահառուների թվաքանակը (Ա/Բ). *նշել յուրաքանչյուր խմբում ընդգրկվածների թիվը* | Ա – 13<br>Բ - 137 |
| 3. | կենցաղային սպասարկում. | 152 |
| 4. | բժշկական օգնություն և սպասարկում. | 152 |
| 5. | սոցիալ-հոգեբանական օգնություն | 152 |
| 5.1 | այդ թվում՝ մշակութային բնույթի ծառայությունների և միջոցառումների կազմակերպում | 24 |
| 6. | խորհրդատվական օգնություն | 2 |
| 7. | այլ ծառայություն (*նշել*) հոգեբանական խորհրդատվություն | 15 |

Կազմակերպության ղեկավար ___*Երվանդ Մխիթարյան*___ «15» 12.2025թ

[illegible]